ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2026 թ. N 162-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՄԼԵՏ ԽԱՆՈՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Համլետ Վարդկեսի Խանոյանի հայտը (մտից՝ N 938, 2026 թվականի հունիսի 8)՝ ***որոշում եմ***՝

1. Անհատ ձեռնարկատեր Համլետ Խանոյանին տալ 2026 թվականի հունիս–դեկտեմբեր ամիսների ընթացքում Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող արհեստական լճակին կից, ընդհանուր օգտագործման տարածքում կառուցված զբոսաշրջային-ժամանցային սրահում հանրային սննդի կազմակերպման և իրացման ու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություններ (համապատասխանաբար՝ Թույլտվություն N 36 և N 37):

2. Անհատ ձեռնարկատեր Համլետ Խանոյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ յուրաքանչյուր եռամսյակ,

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Համլետ Խանոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2026 թ. N 163-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանի հայտը (մտից՝ N 939, 2026 թվականի հունիսի 8)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին տալ 2026 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 22/1/1,22/2 հասցեում գտնվող ռեստորանում հանրային սննդի կազմակերպման և իրացման ու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություններ (Թույլտվություն N 38 և N 39):

2. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ եռամսյակի հաշվարկով,

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 18750 (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2026 թ. N 164-Ա

ԱՍՏՂԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Աստղիկ Ռուբիկի Մարկոսյանի դիմումը (մտից՝ N 940, 08.06.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Աստղիկ Ռուբիկի Մարկոսյանին սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության իրավունքի վկայական N 1227201, տրված՝ 21.06.2005 թ.) պատկանող Ջերմուկ քաղաքի Վարդանյան փողոցի N 1 շենքի 1-ին հարկում գտնվող անշարժ գույքին՝ տարածքին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Վարդանյան փողոց, 1-ին շենք N 20:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2026 թ. N 165-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (ՀՕ-225-Ն) համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 3-րդ կետով և այդ որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերին համապատասխան՝ հիմք ընդունելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Հ. Ալոյանի N Հ/Ա-2026/84 գրությունը (մտից N 891, 01.06.2026 թ.)՝ ***որոշում եմ***

1. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2016 թվականի օգոստոսի 18-ի N 18082016-10-0104 վկայական) Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 28-րդ փողոցի N 9 հասցեում գտնվող 2,08359 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 184,1 քմ մակերեսով ձուլարանը և 333,2 քմ մակերեսով պահեստը (ներքին ընդհանուր մակերեսը՝ 517,3 քմ, արտաքին ընդհանուր մակերեսը՝ 551,2 քմ) (այսուհետ՝ շինություններ), համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026XRPDXF):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված շինությունները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն)

օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել 849950 (ութ հարյուր քառասունիննը հազար իննը հարյուր հիսուն) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1028), հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թ. N 166-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻՆԵ ՍՈՒԳԻԿՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ–ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարինե Սուգիկյանի հայտը (մտից՝ N 967, 2026 թվականի հունիսի 12)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Մարինե Սուգիկյանին տալ 2026 թվականի մայիս–հոկտեմբեր ամիսների ընթացքում Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 16ա հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 40):

2. Անհատ ձեռնարկատեր Մարինե Սուգիկյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7500–ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Մարինե Սուգիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ հոկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թ. N 167-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԹԵՀՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Թեհմինե Գվիդոնի Հարությունյանի հայտը (մտից՝ N 965, 2026 թվականի հունիսի 11)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Թեհմինե Գվիդոնի Հարությունյանին տալ 2026 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ շենքի N 46 հասցեում գտնվող՝ խանութի վերածված բնակարանում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրա–տեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 41):

2. Անհատ ձեռնարկատեր Թեհմինե Գվիդոնի Հարությունյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 9750–ական (ինը հազար յոթ հարյուր հիսունական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Անհատ ձեռնարկատեր Թեհմինե Գվիդոնի Հարությունյանին պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան փոփոխել բնակարանի գործառնական նշանակությունը որպես հասարակական նշանակության տարածքի՝ խանութի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Թեհմինե Գվիդոնի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թ. N 168-Ա

ԱՐՄԱՆ ՏԱՐՈՆԻ ԱՐԱՐԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Արման Տարոնի Արարատյանի դիմումը (մտից՝ N 954, 10.06.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող, Արման Տարոնի Արարատյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 25092019-10-0003 վկայական) անշարժ գույքին նախկինում տրված հասցեի՝ գ. Գնդեվազ, Գետիկ 2/1, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, Երևան–Մեղրի մայրուղի N 7 փարածք:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թ. N 169-Ա

ԱՐՄԱՆ ՏԱՐՈՆԻ ԱՐԱՐԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Արման Տարոնի Արարատյանի դիմումը (մտից՝ N 953, 10.06.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող, Արման Տարոնի Արարատյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 16072019-10-0022 վկայական) անշարժ գույքին նախկինում տրված հասցեի՝ գ. Գնդեվազ, Գետիկ 2/2, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, Երևան–Մեղրի մայրուղի N 9 տարածք:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թ. N 170-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 3.1-11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի 7-րդ հոդվածով, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի մայիսի 20-ի «Երիտասարդական աշխատողի վերապատրաստման կարգը, որակավորման չափանիշները և երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 17-Ն հրամանի դրույթներով՝ ***որոշում եմ՝***

1.Ջերմուկի համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 21-ի N 63-Ա որոշման N 4 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 3.1-11 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ) անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Ե. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ» մասի 10-րդ կետի «ա» ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «բարձրագույն կրթություն» բառերը փոխարինել «*առնվազն միջին մասնագիտական կրթություն և երիտասարդական աշխատողի հավաստագիր*» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2026 թ. N 171-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ և 176-րդ կետերով՝ ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.

1) աշխատակազմի գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-2)

2) սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-11)

3) սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-1)

2. Սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների օր նշանակել 2026 թվականի հուլիսի 16-ը:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Հայտարարությունների տեքստերը համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի
հունիսի 15-ի N 171-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. ***Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 2.3-2)***

Պաշտոնի անձնագիր

Պաշտոնի առաջացման ամսաթիվն ու հիմքը՝ *ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի N 108 հրաման*

Հիմնական աշխատավարձի չափը՝ 283250 դրամ

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը

ա/ մասնակցում է համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման սխեմաների՝ սահմանված կարգով քննարկման ու մշակման նախապատրաստական աշխատանքներին, ներկայացնում է համապատասխան հաշվարկներ ու առաջարկություններ, կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը,

բ/ հսկողություն է իրականացնում ավագանու կողմից հաստատված քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ

գ/ օրենքով սահմանված կարգով ղեկավարում է համայնքի հողային հաշվեկշռի աշխատանքները, իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, նախապատրաստում է հողհատկացման որոշումները և հողերի նպատակային ու գործառնական նշանակության փոփոխության հետ կապված առաջարկությունները՝ սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնելու համար:

դ/ կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող գույքի նկատմամբ կապիտալ և ընթացիկ բնույթի աշխատանքների տեխնիկական առաջադրանքների հիմնավորումը և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը:

ե/ վերահսկողություն է իրականացնում համայնքի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ, վեր է հանում բացահայտված՝ իրականացվող ինքնակամ շինարարության դեպքերը, դրանք կանխելու և հետևանքները վերացնելու համար առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, հսկողություն է իրականացնում համայնքի կողմից տրված շինարարական թույլտվությունների պահանջների կատարման նկատմամբ,

զ/իրականացնում է ամենօրյա շրջայցեր՝ համայնքի տարածքում իրականացվող ինքնակամ շինարարությունների հայտնաբերման նպատակով, կանխում և դրանց վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնում համայնքի ղեկավարին

է/ մասնակցում է ավարտված շինարարական օբյեկտների ավարտական ակտերի կազմման հանձնաժողովների աշխատանքներին, կազմակերպում է քաղաքաշինության և հողհատկացման հետ կապված գործառույթները՝ համաձայն հաստատված գլխավոր հատակագծի

ը/ ճանապարհային երթևեկության սխեմային համապատասխան համակարգում է ճանապարհային երթևեկության անվտանգությունը ապահովելու նպատակով ավտոկանգառների, ավտոկայանատեղերի հատկացման, տեխնիկական միջոցների և ճանապարհային նշանների տեղադրման վայրերի վերաբերյալ աշխատանքները

թ/ վերահսկում է առանց իրավական հիմքերի օգտագործվող հողատարածքների, դրանց հաշվառման, սահմանազատման, քաղաքացիների կողմից այդ հողատարածքների գնման կամ վարձակալության հետ կապված փաստաթղթերի աշխատանքները ապահովում է ավել հողատարածությունը հետ վերցնելու և որպես համայնքային սեփականություն գրանցելու գործընթացները և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին:

ժ/ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում է քաղաքաշինության ոլորտի և հողօգտագործման հարցերի հետ կապված ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստումը

ի/ կազմակերպում է նախագծման, շինարարության և շահագործման թույլտվությունների նախագծերի կազման անհատանները և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին

ծ/հսկողություն է իրականացնում համայնքի տարածքում իրականացվող շինարարությունների նկատմամբ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը շինարարական թույլտվությունների, նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին

լ/ պատրաստում է գլխավոր հատակագծից հանույթներ, մասնակցում է հողերի չափագրական աշխատանքներին, օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ,

խ/ իրականացնում է այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ

Ներկայացվող պահանջները՝

ա/ բարձրագույն մասնագիտական (ճարտարապետության կամ քաղաքաշինության բնագավառների գծով) կրթություն՝ առնվազն բակալավրի որակավորմամբ, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ

բ/ պաշտոնի անձնագրով սահմանված իրավական ակտերի իմացություն

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ/ օտար լեզվի (լեզուների) իմացություն (ազատ կարդալ և բացատրվել):

Մրցույթը կկայանա 2026 թվականի հուլիսի 16-ին ժամը 11. 00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի շենքում:

Հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փ. 8:

2. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-11)

Պաշտոնի անձնագիր

Պաշտոնի առաջացման ամսաթիվն ու հիմքը՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 03-ի N 173-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 425-Ա հրաման*

Հիմնական աշխատավարձի չափը՝ 206030 դրամ

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

ա) մասնակցում է համայնքի տարածքում պետական երիտասարդական քաղաքականության իրականացման աշխատանքներին, ապահովում է փոխհամագործակցային կապը համայնքի կողմից ստեղծված մշակութային և կրթական կազմակերպությունների միջև, աջակցում է նրանց աշխատանքներին

բ) պատասխանատու է համայնքում երիտասարդության դերի բարձրացման համար, բաժնի պետի հետ համատեղ քննարկում և մշակում է երիտասարդական տեղական քաղաքականության հիմնական սկզբունքները, ուղղությունները, առաջնահերթությունները

գ) կազմակերպում է երիտասարդական միջոցառումներ, ուսումնասիրում է երիտասարդական ծրագրերի, նախաձեռնությունների և միջոցառումների համար բավարար ռեսուրսների առկայությունը, առաջարկություններ է ներկայացնում դրանց արդյունավետ կառավարման և մասնակցային բյուջետավորման համար

դ) երիտասարդների համար կազմակերպում է ապահով, հասանելի և մատչելի միջավայր՝ նախաձեռնելով երիտասարդական տարածքների ստեղծում համայնքի բոլոր բնակավայրերում

ե) համայնքը երիտասարդների համար գրավիչ դարձնելու սկզբունքին համաձայն՝ բաժնի պետին առաջարկություններ է ներկայացնում պարբերաբար համալրելու և թարմացնելու երիտասարդական միջավայրերն ու ենթակառուցվածքները

զ) մասնակցում է երիտասարդների իրավունքների իրացման, դերի բարձրացման և համայնքում նրանց իրական ազդեցության ձեռքբերման նպատակով կայուն

երկխոսության մեխանիզմների ներդրման աշխատանքներին՝ երիտասարդական խորհրդի, խորհրդակցական մարմնի, փորձագիտական խմբի և այլ ձևաչափերով, աջակցում է համայնքում գործող երիտասարդական կենտրոնի աշխատանքներին,

է) աջակցում է տեղական մակարդակում երիտասարդների մասնակցության իրավունքի իրացումը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում հանձնառու է ապահովելու համայնքի երիտասարդների և հասարակական ու համայնքին կազմակերպությունների միջև աշխատանքային կապը՝ ծրագրային համագործակցության, ծառայությունների պատվիրակման, ինչպես նաև՝ ֆինանսական-ադմինիստրատիվ մեխանիզմներով,

ը) աջակցում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումների և մրցույթների կազմակերպմանը, բաժնի պետի հանձնարարությամբ, օրենքով սահմանված կարգով իրականացնում է ստուգայցեր համայնքի ենթակայությամբ գործող սպորտային-մարզական խմբակներ՝ աշխատանքային և կրթական ծրագրերի իրականացումը ուսումնասիրելու, կանոնադրությամբ նախատեսված գործառույթների կատարումը, անվտանգության և սանիտարահիգենիկ նորմերի պահանջների պահպանումը ապահովելու նպատակով, բացահայտում թերությունները, ի հայտ եկած փաստերը արձանագրում և ներկայացնում առաջարկություններ

թ) բաժնի պետի հանձնարարությամբ մշակում է ծրագրեր և ներկայացնում առաջարկություններ համայնքի ենթակայության սպորտային-մարզական խմբակների աշխատանքների արդյունավետությունը ապահովելու համար

Ներկայացվող պահանջները՝

ա/ առնվազն միջին մասնագիտական կրթություն և Երիտասարդական աշխատողի հավաստագիր:

բ/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին», «Երիտասարդական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1428-Ն որոշման, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ/ օտար լեզվի (լեզուների) իմացություն (ազատ կարդալ և բացատրվել):

Մրցույթը կկայանա 2026 թվականի հուլիսի 16-ին ժամը 12. 00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի շենքում:

Հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փ. 8:

3. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-1)

Պաշտոնի անձնագիր

Պաշտոնի առաջացման ամսաթիվն ու հիմքը՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 03-ի N 173-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 425-Ա հրաման*

Հիմնական աշխատավարձի չափը՝ 150677 դրամ

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

ա) իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում բացահայտելու անձի կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող կամ երեխայի պաշտպանության կարիքից ելնող իրավիճակները,

բ) առաջարկություններ է ներկայացնում իր իրավասության սահմաններում ձեռնարկված միջոցների արդյունքում համայնքում հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքների) սոցիալական պայմանների բարելավման, այդ թվում՝ համայնքի կողմից սոցիալական ծառայությունների հնարավոր տեսակների տրամադրման ուղղությամբ.

գ) ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները՝ ըստ անհրաժեշտության կատարելով տնային այցելություններ և արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին

դ) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացիներին օգնում է հաղթահարելու առաջացած իրավիճակը, մասնակցում է համայնքում սոցիալական աջակցություն ստացողի անհատական սոցիալական ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին, պահպանում է իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքներին) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

ե) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական աջակցության տրամադրման գործընթացի բարելավման ուղղությամբ, մասնակցում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական աջակցության համայնքային ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.

զ) անհրաժեշտության դեպքում, իր անմիջական ղեկավարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի, այլ տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին,

է) մասնակցում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման աշխատանքներին. ընդգրկվում է համայնքի ղեկավարին կից

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում և կատարում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները, առաջարկություններ է ներկայացնում համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի խնդիրների լուծման ուղղությամբ

ը) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, իրականացնում է քաղաքացիների՝ իր ոլորտին առնչվող դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները

Ներկայացվող պահանջները՝

ա/ առնվազն միջնակարգ կրթություն և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացն ավարտելու մասին համապատասխան վկայական

բ/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի, սոցիալական աջակցություն հայցողի, ինչպես նաև ստացողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող օրենսդրության անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

դ/ օտար լեզվի (լեզուների) իմացություն (ազատ կարդալ և բացատրվել):

Մրցույթը կկայանա 2026 թվականի հուլիսի 16-ին ժամը 14. 00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի շենքում:

Հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փ. 8:

Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Դիմող քաղաքացիները Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազ (ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 8, հեռ. 098170371, էլ. փոստ՝ jermuk.vayotsdzor@mta.gov.am) կամ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն (ք. Եղեգնաձոր,Շահումյան փողոց N 5, հեռ. 028123061, էլ. փոստ՝ vayotsdzortim@gmail.com) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում ***(լրացվում է տեղում)***.

2) քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.

3) դիպլոմի լուսապատճեն.

4) առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ),

5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն,

7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը***(լրացվում է տեղում)***

9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ ***(լրացվում է տեղում)***.

10) հայտարարություն այն մասին դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն ***(լրացվում է տեղում)***.

11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2026 թվականի հունիսի 29–ի ժամը 18.00-ն է:

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հեռախոս՝ 028721217, 060747077

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2026 թ. N 172-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԱՐՓԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայարփի Հրահատի Միքայելյանի հայտը (մտից՝ N 974, 2026 թվականի հունիսի 12)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Հայարփի Հրահատի Միքայելյանին տալ 2026 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 2 բազմաբնակարան շենքին կից գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 42):

2. Անհատ ձեռնարկատեր Հայարփի Հրահատի Միքայելյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7500–ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հայարփի Հրահատի Միքայելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆՈՒԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2026 թ. N 173-Ա

ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Գրիգորի Հարությունյանի դիմումը (մտից՝ N 968, 12.06.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 5 շենք 6 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Սրբեփանյան փողոց 5–րդ շենք N 6:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2026 թ. N 174-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագրի գործառնական ձեռնարկի պահանջները և նպատակ ունենալով ապահովել համայնքում նախատեսված ենթածրագրերի իրականացման ընթացքում տեղական մակարդակում համակարգումը, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև հետադարձ կապի և բողոքների մեխանիզմի արդյունավետ գործառնությունը՝ *որոշում եմ՝*

1. Ստեղծել Տեղական աշխատանքային խումբ (ՏԱԽ) կլաստերի զարգացման պլանի իրականացման նպատակով:

2. Հաստատել ՏԱԽ պարտադիր կազմը հետևյալ կազմով.

1) Մանան Գևորգյան – Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՏԱԽ նախագահ
2) Արտուշ Սիմոնյան – Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ,
3) Ստեփանոս Վարդանյան – Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ ՏԱԽ քարտուղար,
4) Աղասի Առաելյան – Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ համայնքի ինժեներ / շինարարության մասնագետ,
5) Նարեկ Գրիգորյան - Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
6) Վաղինակ Մանուկյան – Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ բնապահպանական հարցերի պատասխանատու,
7) Անուշ Առաքելյան – սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ՝ սոցիալական հարցերի պատասխանատու,
8) Վասիլ Ասլանյան - Վայոց ձորի մարզպետի տեղակալ,
9) Արամ Կոստանյան – Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,
10) Մուշեղ Աղաջանյան – «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ–ի տնօրեն,
11) Գոռ Թադևոսյան - «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ի տնօրեն,
12) Հայկուհի Առաելյան - Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

13) Աշխեն Սարգսյան - Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Ըստ անհրաժեշտության ՏԱԽ նիստերին կհրավիրվեն նաև կապալառու և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, բնակիչներ, ենթածրագրի իրականացման բնակավայրի ղեկավարը:

3. Սահմանել ՏԱԽ հիմնական գործառույթները՝

ա) աջակցել և համակարգել ենթածրագր(եր)ի իրականացումը տեղական մակարդակում:

բ) հավաքագրել և Ծրագրի աշխատանքային խմբին փոխանցել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տվյալները, փաստաթղթերը և տեղեկատվությունը:

գ) աջակցել թույլտվությունների ստացմանը, համայնքի իրավասության շրջանակում առաջացող խնդիրների և խոչընդոտների լուծմանը, ինչպես նաև ապահովել ծրագրային միջոցառումների ժամանակին իրականացումը:

դ) ապահովել Ծրագրի վերաբերյալ հաղորդակցությունը շահառուների, տեղական բնակչության և համայնքային կառույցների հետ:

ե) քննարկել տեղական մակարդակում առաջացող խնդիրներն ու մարտահրավերները, առաջարկել իրատեսական լուծումներ և դրանք ներկայացնել ծրագրի պատասխանատու մարմիններին՝ համապատասխանաբար Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աշխատակիցների և/կամ Զբոսաշրջության կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ:

զ) իրականացնել հողօգտագործման, առկա ենթակառուցվածքների վիճակի և այլ ընթացակարգերի հետ կապված գործընթացների ստուգում՝ համաձայն Ծրագրի պահանջների, ընթացակարգերի և ժամկետների, Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների շրջանակում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աշխատակիցների և/կամ Զբոսաշրջության կոմիտեի համակարգմամբ:

4. Ստեփանոս Վարդանյանին նշանակել համայնքային կապերի պատասխանատու՝ հետադարձ կապի և բողոքների կառավարման մեխանիզմի գործարկումը ապահովելու նպատակով:

5. Սահմանել, որ՝

ա) ՏԱԽ կազմում կանանց մասնակցությունը պետք է կազմի առնվազն 30 տոկոս,

բ) ՏԱԽ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ,

գ) նիստերի արձանագրությունները ներկայացվում են Ծրագրի աշխատանքային խմբին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին,

դ) ՏԱԽ գործունեությունն իրականացվում է Ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թ. N 175-Ա

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Անուշավանի Հովսեփյանի՝ 2026 թվականի մայիսի 7-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՃՀԱ/699/13044-26 հայտը՝ (մտից N 1011, 17.06.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 4/1 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0030-0030) վրա մանսարդային հարկով մեկհարկանի բնակելի տուն կառուցելու համար նախագծանախահաշվային փատաթղթերի մշակման նպատակով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Անուշավանի Հովսեփյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Սարգիս Անուշավանի Հովսեփյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Անուշավանի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թ. N 176-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1.2-1 ԵՎ 2.3-3 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված Համայնքային գույքի օտարման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման մեթոդական ուղեցույցի և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 25-ի N 134-Լ որոշման դրույթները՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի N 18-Ա որոշման՝

ա/ N 1 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1.2-1 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի քարտուղար) անձնագրում կատարել հետևյալ լրացումը՝ «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետում ավելացնել նոր՝ «ձ» ենթակետը հետևյալ խմբագրությամբ՝ «*ձ/ համայնքային գույքի օտարման էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման գործընթացի իրականացման էլեկտրոնային համակարգի օգտվող է և համարվում է էլեկտրոնային աճուրդների անցկացման պատասխանատուն՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 25-ի N 134-Լ որոշմամբ սահմանված գործառույթներով*»,

բ/ N 5 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2.3-3 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի գլխավոր մասնագետ) անձնագրում «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետի «կ» ենթակետում «համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու նպատակով ստեղծվածաճուրդայինհանձնաժողովի աճուրդավարն է» բառերը փոխարինել «*համայնքային գույքի օտարման էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման գործընթացի իրականացման էլեկտրոնային համակարգի օգտվող է՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 25-ի N 134-Լ որոշմամբ սահմանված գործառույթներով*» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2026 թ. N 177-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 284-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-17062026-10-0072 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 4-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից Սեդա Բաբաջանյանի ընտանիքի կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու մասին» N 284-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետում «տրամադրել» բառից հետո ավելացնել «Խաչատուր Արամի Բաբաջանյանին (ներկայում՝ հանգուցյալ)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2026 թ. N 178-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱԼԲԵՐՏ ԽԱՉԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ալբերտ Խաչիկի Մնացականյանի դիմումը (մտից՝ N 1030, 19.06.2026թ.) ***որոշում եմ՝***

1. Ալբերտ Խաչիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2622506) Ջերմուկ համայքի Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ բնակավայրերի նշանակության հողամասին (հասարակական կառուցապատման), տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 5-րդ փողոց N 3:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2026 թ. N 179-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶԱՐԵՀ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Զարեհ Ժորայի Նավասարդյանի հայտը (մտից՝ N 1025, 2026 թվականի հունիսի 18)՝ ***որոշում եմ՝***

1. Զարեհ Նավասարդյանին 2026 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում (երկու եռամսյակ) տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի՝ Ամուլսարի տարածքում գտնվող կրպակում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 43):

2. Զարեհ Նավասարդյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 5000 (հինգ հազար) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զարեհ Նավասարդյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2026 թ. N 180-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՈՏՀԱՐՔԸ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕԳՏՎԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշման 1-ին կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի N 16-Ա որոշմամբ և հաշվի առնելով Գնդեվազ գյուղի բնակիչ Հակոբ Հակոբյանի՝ 2026 թվականի հունիսի 15-ի դիմումը (մտից՝ N 978), ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1 հեկտար (խոտհարք, հողակադաստրային շրջանը՝ Ուրց-Վայոց ձոր, հողատեսքի գնահատման խումբը՝ 4) 2 (երկու) տարի ժամկետով, ամսական 1725 (հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամ վճարով օգտվելու տրամադրել Գնդեվազ գյուղի բնակիչ Հակոբ Վարդանի Հակոբյանին՝ պարզ գրավոր ձևով կնքելով պայմանագիր:

2. Քաղաքացի Հակոբ Վարդանի Հակոբյանի հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Վարդանի Հակոբյանին որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2026 թ. N 181-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ, 609-րդ, 612-րդ հոդվածների 1-ին մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 18-ի N 53-Ա որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի գույքի հաշվեկշռում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գեոդեզիական գործիքը (մոդելը՝ CHCNAV 190/150 HCE320/LT700) 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 25.09.2026 թ., և ամսական 60000 (վաթսուն հազար) դրամ վարձավճարով վարձակալության տրամադրել քարտեզագրական, հողաշինա–րարական, չափագրական և հաշվառման գործունեության բնագավառներում որակավորում ունեցող մասնագետ Արման Սամվելի Գևորգյանին (որակավորման վկայականի համարը՝ 0241):

2. Վարձակալության պայմանագրում ներառել Արման Սամվելի Գևորգյանի կողմից համայքային՝ ոլորտային անհրաժեշտ աշխատանքների անվճար կատարման և գործիքի պատշաճ օգտագործման և պայմանագրի ժամկետի ավարտին պատշաճ վերադարձման պարտավորությունները:

3.Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնին՝ վարձակալության պայմանագրի կնքումից հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գործիքի ընդունում–հանձնում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Արման Սամվելի Գևորգյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թ. N 182-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ԷՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով՝ ***որոշում եմ՝***

1. Զբոսաշրջային ակտիվ սեզոնին ընդառաջ Ջերմուկ քաղաքի վարչական տարածքը, մասնավորապես՝ Շահումյան փողոցի կամրջից ներքև գտնվող հատվածը և Վարդան Մամիկոնյանի անձեռակերտ արձանին հարակից տեղանքը բարեկարգելու և սանիտարական մաքրման նպատակով թույլատրել իրականացնելու ծառերի էտ՝ յուրաքանչյուր ծառի դեպքում հեռացնելով առավելագույնը 10–15% կանաչ զանգված:

2. «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ էտման աշխատանքներին ապահովել ՀՈԱԿ-ի դենդրոլոգի ներկայությունը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Արտուշ Սիմոնյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թ. N 183-Ա

ՍԱՄՍՈՆ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 4 ՀԱՍՑԵՈՒՄ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1-ին կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Ս. Ավետյանի՝ 2026 թվականի հունիսի 16-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/3935-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի հունիսի 24-ի N 1064) և «ՍՏ ԱՐՏ» ՍՊ ընկերության Ե–2409/2026 երաշխավորագիրը՝ ***որոշում եմ՝***

1. Համաձայնություն տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2026 թվականի հունիսի 2-ին տրված N ՎՋ-2406/2026 տեխնիկական պայմանի ուղեգծով հետագիծ-նախագծային փաստաթղթերին և Ջերմուկ քաղաքի բնակիչ Սամսոն Ավետյանին տրամադրել Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 4 հասցեում գտնվող սեփական հողամասում արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Սամսոն Ավետյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամսոն Ավետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թ. N 184-Ա

«ՋԵՐՄՈՒԿ ՏՈՒՐԲՈՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Ջերմուկ համայնքում հողի կադաստրային արժեքի փոփոխմամբ պայմանավորված գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման պայմանագրերում վարձավճարի (վճարի) փոփոխություն կատարելու մասին» N 32-Ա որոշումը և «Ջերմուկ Տուրբոշին» ՍՊ ընկերության միջև 2007 թվականի հունվարի 22-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 51.–ին և 5.2-րդ կետերը, հաշվի առնելով «Ջերմուկ Տուրբոշին» ՍՊ ընկերության կառավարող կազմակերպության «Երեք ուղղություն» ՓԲԸ–ի տնօրեն Հ. Պապյանի դիմում–համաձայնությունը (մտից N 1057, 23.06.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության նոր սահմանների և, ըստ այդմ, կադաստրային նոր արժեքների սահմանմամբ պայմանավորված Ջերմուկ համայնքի և «Ջերմուկ Տուրբոշին» ՍՊ ընկերության միջև 2007 թվականի հունվարի 22-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում (վավերացված է Վայք (Ջերմուկ) նոտարական տարածքի նոտարի կողմից 22.01.2007 թ. 22 սեղանամատյանում) կատարել հետևյալ փոփոխությունը՝

- *պայմանագրի 5.1-ին կետը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է 24265 դրամ՝ 2024 թվականի համար, 36400 դրամ՝ 2025 թվականի համար և 48530 դրամ՝ 2026 թվականի և հաջորդող տարիների համար»:*

2. «Ջերմուկ Տուրբոշին» ՍՊ ընկերության հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի

տրամադրման մասին պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջերմուկ Տուրբոշին» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2026 թ. N 185-Ա

«ԿԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 88-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարինե Հայկարամի Հովակիմյանի դիմում-հայտը (մտից՝ 1077, 2026 թվականի հունիսի 25)՝ ***որոշում եմ՝***

1. Թույլատրել «Կարինե Հովակիմյան Հայկարամի» անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի եզրամասում, ըստ ներկայացված էսքիզի, տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 44):

2. Կարինե Հայկարամի Հովակիմյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Հայկարամի Հովակիմյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2026 թ. N 186-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ Կ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Անահիտ Սերյոժայի Ավետիսյանի դիմումը (մտից՝ N 1060, 24.06.2026թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքիԿեչուտ գյուղի Կ. Աղաբեկյան փողոցի 1-ին շենքը, նախկինում տրված հասցեն՝ ք. Ջերմուկ, 3–րդ փողոց 42 շենք վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, Կ. Աղաբեկյան փողոց շենք N 1:

2. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի Կ. Աղաբեկյան փողոցի N 1 շենքում գտնվող բնակարանը, նախկինում տրված հասցեն՝ ք. Ջերմուկ, 3–րդ փողոց 42 շենք N 2 բնակարան, վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, Կ. Աղաբեկյան փողոց 1-ին շենք N 1:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. հունիսի 26
Ջերմուկ